

## Ղավիթ Զուլիկաևյան, Կարինե Ասատրյան

### ԱՐՑԱԽԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1991-1994 ԹԹ. ԵՎ ՆՐԱ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

**Բանալի բարեր-** Զհայտարարված պատերազմ, պատմագրություն, «Օղակ», ազատագրական պատերազմ, արցախյան հիմնախնդիր:

1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի 20-րդ գումարման խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց դիմել Հայկական ԽՍՀ-ի, Ադրբեջանական ԽՍՀ-ի և ԽՍՀՄ գերագույն խորհրդադրության՝ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ մտցնելու մասին:

Ադրբեջանի իշխանությունները բռնեցին արցախահայության արդարացի պահանջը խեղինելու ուղին:

Ադրբեջանական ագրեսիան ծրագրված էր: Այն սկզբնական շրջանում դրսւորվել է համապարփակ շրջակակման, պետական ու անհատական ունեցվածքների բռնագրավման, հակաօրինական բազմաթիվ գործողությունների տեսքով:

Ադրբեջանի ռազմատենչ հայտարարություններին հետևեց «Օղակ» («Կոլցո») գործողությունը: Ապրիլի 30-ին ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրության ներքին գորքերը և Ադրբեջանի օմօնականները սկսեցին լայնածավալ գործողություններ: Այդ գործողության հիմնական նպատակն էր հայաթափել Լեռնային Ղարաբաղի Շահումյանի, Շուշիի, Մարտակերտի, Հադրութի շրջանները: Փաստորեն 1991 թ. մայիս-հունիս ամիսներին սկսվեց Արցախյան ազատագրական պատերազմը, որը բաժանվում էր երեք փուլի:

1. 1991թ. ապրիլ-հունիս՝ «Օղակ» գործողությունը և հայկական մի շարք բնակավայրերի բռնազավթում ու բնակչության բռնի գաղթեցում,

2. 1992 թ. հունիս-1993 թ. հունվար՝ լայնածավալ ագրեսիայի հետևանքով Շահումյանի և Մարտակերտի շրջանների մեջ մասի զավթում,

4. 1993 թ. դեկտեմբեր-1994 թ.՝ հունվար ազատագրական լայնածավալ ռազմական գործողություններ ԼՂ սահմանների ողջ երկայնքով<sup>1</sup>:

Արցախյան ազատագրական պատերազմում հայ ժողովուրդը կարողացավ տանել փայլուն հաղթանակներ՝ ի վերջո պատերազմը սանձագերծած Ադրբեջանին պարտադրելով կնքել հաշտության պայմանագիր:

1991-1994 թթ. արցախյան հիմնախնդրի շրջափուլի կարևոր իրողություններից էին 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի Հանրապետություն) հրչակումը և 1992 թ. մայիսի 9-ին Շուշիի ազատագրումը, որոնք կուտրում էին Ադրբեջանի ռազմական ուժն ու կանխորոշում պատերազմի հետագա ելքը: Հայկական ուժերի հաղթարշավն ի վերջո պարտադրեց Ադրբեջանին 1994 թ. մայիսին ընդունել Ուստաստանի միջնորդությունն ու ԼՂ և ՀՀ հետ կնքել գինադադար:

Արցախյան ազատագրական պատերազմի առանձին դրվագներ ամբողջության մեջ առաջին անգամ ուսումնասիրել է Սենոր Հասրաթյանը<sup>2</sup>:

Ի մի բերելով Ս. Հասրաթյանի «Գոյամարտ (ԼՂ պաշտպանության բանակի մարտական ուղղությունը պատմության համառոտ ակնարկ)» և «Ղարաբաղյան պատերազմ» աշխատությունները՝ պետք է նշել, որ այդ աշխատություններում ռազմական գործողությունները ներկայացված են ընդհանուր գծերով, իսկ խոշոր ռազմական գործողությունները համապատասխան վերլուծության չեն ենթարկվել: Որոշ խնդիրներ դուրս են մնացել հեղինակի ուշադրությունից, իսկ բանակի կազմակերպման գործընթացը բացթողումներով է ներկայացված: Մասնավորապես հեղինակը չի նշում 1992 թ.

<sup>1</sup>Տե՛ս Հարությունյան Մ., Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Ե., 2000, էջ 45:

<sup>2</sup>Հասրաթյան Ս., Գոյամարտ (ԼՂ պաշտպանության բանակի մարտական ուղղությունը ակնարկ), Ստեփանակերտ, 1998, նույնի՝ Ղարաբաղյան պատերազմ, Ե., 2001:

փետրվարի 24-ի 174 գԽ որոշումն ինքնապաշտպանական ուժերի մասինև 1993 թ. նոյեմբերի 10-ի հրամանագիրը հՊՈՒ-ն Պաշտպանության բանակի վերածելու մասին որոշումները: Հեղինակը չի տարանջատում ռազմական ու քաղաքական գործընթացները, նույնիսկ նշված չէ, թե երբ է սկսվել պատերազմը:

Սենոր Հասրաթյանի հաջորդ աշխատությունը<sup>1</sup> նվիրված է Կենտրոնական պաշտպանական շրջանին (ԿՊԸ) և նրա ստորաբաժանումներին:

1992 թ. օգոստոսի 29-ին 174 ինքնապաշտպանության կոմիտեն որոշում ընդունեց «ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շինարարության կազմակերպման հաստիքային նոր կառուցվածքի անցնելու մասին», որով մեկնարկեց Պաշտպանության Բանակի ԿՊԸ կազմավորման գործընթացը:

Գրքում լուսաբանված է ԿՊԸ կազմավորման գործընթացը, որն ավարտվեց 1992 թ. սեպտեմբերին: Համակողմանիորեն ներկայացված են ԿՊԸ ստորաբաժանումների հրականացրած ռազմական գործողությունները, որոնք ընդգրկում էին հյուսիսային ուղղությունը (1993 թ. փետրվար) Քարվաճարի, Մարտակերտի ազատագրումները: ԿՊԸ ստորաբաժանումների վարած մարտերը հասնում են մինչև 1994 թ. : Գիրքն ունի ԿՊԸ ենթակա ստորաբաժանումների մարտիկների անունների ցանկն ու նկարները: Այսպիսով՝ այս աշխատությունը կարևոր փաստեր է հաղորդում բանակաշինության և ռազմական գործողությունների մասին, որոնք իրականացվել են ԿՊԸ-ի հրամանատարության տակ:

Արցախյան ազատագրական պատերազմն ինչ-որ չափով լուսաբանված է նաև Սենոր Հասրաթյանի մյուս աշխատությունում<sup>2</sup>: Գրքում ներկայացված է գեներալ Քրիստափոր Իվանյանի կյանքն ու գործներությունը: Հեղինակը գնահատում է ք. Իվանյանի ներդրումը բանակաշինության գործընթացում՝ ներկայացնելով գեներալի քայլերն այդ ուղղությամբ: Այսպես՝ 1992 թ. սեպտեմբերին նրա ջանքերով է, որ Ստեփանակերտի մերձակա Ազգեստան գյուղում տեղի ունեցավ հրետանավորների առաջին հավաքը, 1993 թ. ամռանը նա նախաձեռնեց բանակային հրետանային բրիգադի ստեղծման գործընթացը և այդպես շարունակ:

Այսպիսով՝ գիրքը, նվիրված լինելով գեներալ ք. Իվանյանի կյանքին ու գործունեությանը, ընթացողի առաջ նոր մանրամասներ է բացում ռազմական տարբեր գործողությունների և բանակաշինության խնդիրների մասին:

Ռազմական գործողությունների ու դրանց հետ կապված քաղաքական և դիվանագիտական ձեռնարկումների մասին փաստական նյութ է պարունակում Վ. Հարությունյանի ժողովածուի 4-րդ<sup>3</sup> և 5-րդ<sup>4</sup> մասերը: Նրա տեղեկություններն ամբողջական չեն, կան որոշ տվյալներ պետականաշինության գործընթացից:

Ռազմական որոշ գործողությունների մասին տեղեկություններ կան Ռազմիկ Պետրոսյանի գրքում<sup>5</sup>, սակայն գրքում բացակայում են Մարտակերտի ուղղությամբ հրականացված մարտական գործողությունները: Ռազմական գործողությունների նկարգրությանն է նվիրված նաև Փ. Օհանջանյանի գիրքը<sup>6</sup>:

Մարտունու շրջանում տեղի ունեցած իրադարձությունները և մարտական գործողությունները լուսաբանված են Ս. Քամալյանի գրքում<sup>7</sup>, որտեղ խոսվում է նաև այդ շրջանում ստորաբաժանումների կազմակերպման ու մարտական ուղու մասին: Հեղինակի մեկ այլ գիրք<sup>8</sup> նվիրված է <<Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի (Ավո) կյան-

<sup>1</sup> Հասրաթյան Ս., Մարտանցում (Կենտրոնական պաշտպանական շրջանի մարտական ուղու պատմությունը), Ե., 2001:

<sup>2</sup> Հասրաթյան Ս., Գեներալ Իվանյան, Ե., 2004:

<sup>3</sup> Արյունյան Վ., Սոբիտիա և Հայութ Կարաբախ. Հրուտական պատմություն, Ե., 1994.

<sup>4</sup> Արյունյան Վ., Սոբիտիա և Հայութ Կարաբախ. Հրուտական պատմություն, Ե., 1995.

<sup>5</sup> Պետրոսյան Վ., Արցախի Պաշտպանության դիվանագիտում, Ե., 1997, գրքի լրամշակված տարբերակը-Արցախ, պատերազմ, զինադարձական պատմություն, Ե., 2001:

<sup>6</sup> Օհանջանյան Փ., Ղարաբաղի ազատագրական պատերազմը, Ե., 2001:

<sup>7</sup> Կամալյան Ս., Կարաբախ և այլ ազգային պատմություններ, Կամալյան Ս., 1994:

<sup>8</sup> Քամալյան Ս., Ավոն մեր աչքերով, Ե., 1994:

ያին ու գործունեությանը, ըստ այդմ նաև լուսաբանված են որոշ ռազմական գործողություններ:

Քաղաքագետ Լևոն Մելիք-Շահնազարյանը ևս անդրադարձել է ռազմական գործողություններին<sup>1</sup>: «Աղբեջանի ռազմական հանցագործությունները եւ ռայական Դարարադի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ» աշխատության մեջ հեղինակն անդրադարձնում է ռազմական գործողություններին 1991 թ. ապրիլից սկսած: Փաստական հարուստ նյութի հիման վրա շարադրում է հայերի ջարդերը (1992 թ. ապրիլին տեղի ունեցած Մարադայի ջարդերը), որոնց նկարագրությունն ուղեկցվում է ականատեսների վկայությունների արձանագրումով, ինչպես նաև սպանվածների անունների թվարկումով<sup>2</sup>: Թեև գիրքը նվիրված է աղբեջանական հանցագործություններին, սակայն այն հանցագործությունների լուսաբանման ֆոնի ներքո բացահայտում է որոշ ռազմական գործողությունների մանրամասներ:

«Военные преступления Азербайджана против мирного населения Нагорного Карабахской Республики, факты и комментарии» опровергает вспомогательные аргументы азербайджанской стороны в пользу обвинения в геноциде армян. Азербайджанские историки и политологи отмечают, что заявление о геноциде было выдвинуто впервые в 1990 году, когда Азербайджан еще не был провозглашен независимым государством. В то время Азербайджан находился под контролем СССР, и заявление о геноциде было выдвинуто властями СССР, а не азербайджанской стороной.

2-ը: Սակայն իրականում ԼՀ անկախության հրչակումն Ադրբեջանի ազրեսիային դիմագրավելու կարևոր ծերնարկումներից էր:

Կարևոր է նաև Ա. Արշակյանի աշխատությունը<sup>3</sup>, որը շարադրված է արխիվային փաստաթղթերի, մանուլի, նորահայտ փաստաթղթերի հենքի վրա և լուսաբանում է Արցախի ազատագրական պատերազմի նախադրյալները, այդ պայքարի շուրջ ուժերի հաճախնությունը Հայաստանում, Արցախում և Սփյուռքում, ինչպես նաև պատերազմի առաջին շրջանում հայկական կողմի հաղթանակները:

1991թ. ապրիլին սկսված «Կոլցո» («Օղակ») գործողության ժամանակ Հաղորդի շրջանի օյուղերի հայաթափման ողբերգական իրադարձություններին է նվիրված ԼՂԳ ԳԽ առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի աշխատությունը<sup>4</sup>:

Ա. Մկրտչյանն իր աշխատության սկզբում կատարում է երկու հարցադրում, որոնց շուրջ էլ շարադրված է աշխատությունը.

1. սպասելի՞ էին արդյոք այն իրադարձությունները, որոնք տեղի ունեցան շրջանում,

2. հիմարավո՞ր էր դրանք կանխել,թե՞ ոչ<sup>5</sup>:

Հեղինակը հեսց Ազգից պատասխանուու է այս հարցադրուսներին նշելով, որ քաղաքական առումով ու տեսականորեն սպասելի էին նման գործողություններ, իսկ կանխելուն խանգարեցին ոչ սոույզ տեղեկությունները, իհասթափությունն ու խուճապը:

Այսուհետև հեղինակը ներկայացնում է 1991 թ. ապրիլի 28-ից Հադրութի շրջանում սկսված «Կոլցո» գործողության ընթացքը, հայերի բռնազաղթը և հայկական կողմի ձեռնարկած քայլերը՝ հայկական գյուղերի թալանը կանխելու համար։ Այսպիսով՝ Ա. Մկրտչյանը, այդ ամենը ներկայացնելով, փորձում է վերհանել ողբերգության իրականապետարները։

«Կոլցո» գործողության լուսաբանան է Նվիրված նաև Նվարդ Սողոմոնյանի աշխատությունը<sup>6</sup>: Հեղինակը փաստագրում է մի շարք իրադարձություններ՝ բացահայտելով նոր մանրամասներ: Ն. Սողոմոնյանը փաստական հենքի վրա ցույց է տալիս

<sup>1</sup> Մելիք-Շահնազարյան Լ., Աղրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Ե., 1988, նույնի՝ Вoenные преступления Азербайджана против мирного населения Нагорного-Карабахской республики, факты и комментарии, Ер., 1992.

<sup>2</sup> ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԳԱՐՅԱՆ Լ., Աշվ. աշխ., էջ 99-101:

<sup>3</sup> Արշակյան Ա., Արցախյան գոյամարտ, Ե., 1991:

<sup>4</sup> Մկրտչյան Ա., ի՞նչ է տեղի ունեցել Հադրութում, Ե., 1992:

<sup>5</sup> Στένη της ουρανού, ή 5:

6 Սողոմոնյան Ն., Կոլց, I, II, III մասեր, Ստեփանակերտ, 1994-2000:

Գետաշենում ինքնապաշտպանության կազմակերպման գործընթացը<sup>1</sup> : Հեղինակը բացահայտում է նաև կենտրոնական իշխանությունների անվերապահ աջակցությունը «Կոլցո» գործողությանը<sup>2</sup>: Այսպիսով՝ Ն. Սողոմոնյանի փաստագրությունը կարևոր է՝ այդ գործողության վերաբերյալ նոր փաստեր ի հայտ բերելու և ադրբեջանական ու կենտրոնական իշխանությունների դեմքը բացահայտելու համար:

Շահումյանի շրջանում և Գետաշենի Ենթաշրջանում տեղի ունեցած իրադարձություններին է նվիրված Ա. Պետրոսյանի «Մեծն Շահէն» աշխատությունը<sup>3</sup>: Աշխատությունում ներկայացված է Շահումյանի ինքնապաշտպանության մեջ մեծ ներդրում ունեցած Շահեն Մեղրյանի կյանքը: Հեղինակն իր շարադրանքում օգտագործել է Շահումյանի շրջանի և Գետաշենի Ենթաշրջանի ինքնապաշտպանության վերաբերյալ պարբերական մամուլում տպագրված նյութերը, ականատեսների հուշերը և առանձին ուսումնասիրություններ:

Ա. Պետրոսյանը ներկայացնում է Գյուլիստանի մելիքության և Մեղրյանների գերդաստանի պատմությունը, Շահումյանի ազատագրական պայքարի ծավալումը: Այստեղ տեղեկություններ կան նաև 1990-1991 թթ. ռազմական գործողությունների մասին:

Հեղինակը ցույց է տալիս 1992 թ. Շուշիի և Լաշխի ազատագրությունից հետո սկսված ադրբեջանական լայնածավալ հարձակաման մանրամասները: Չնայած ուժերի անհավասար լինելուն՝ Շահումյանի ինքնապաշտպանության ուժերը կարողացան կազմակերպել համար դիմադրություն:

Ի մի բերելով Շահումյանի անկման պատճառները՝ հեղինակը հանգում է հետևյալին:

1. Շահումյանի անկման պատճառներից առաջինը՝ Հայաստանում առկա ներքաղաքական հակասություններն են,

2. Շահումյանն Արցախից դուրս դիտելու հատվածական մտածելակերպը,

3. արտաքին ուժերի խարդավանքները:

Չխորանալով այս պատճառների մեկնաբանման մեջ՝ հարկ ենք համարում նշել, որ Շահումյանի անկման պատճառները դեռևս ուսումնասիրնան կարիք ունեն, քանզի առ այսօր շարունակվում են տարաբնույթ կարծիքներ հնչել:

Աշխատության երրորդ մասում հեղինակը ներկայացնում է Շահեն Մեղրյանի գլխավորությամբ կազմակերպված հայդուկային կռվի պատմությունը, Շահեն Մեղրյանի մահը: Վերջին գլխում հեղինակը ներկայացնում է ընկերների կարծիքը Շահեն Մեղրյանի մասին:

Արցախյան պատերազմի վերաբերյալ իր հուշերն է հրատարակել նախկին Խորհրդային սպա Դնեպրիկ Բաղդասարյանը<sup>4</sup>: Հեղինակը ներկայացնում է Արցախյան պատերազմի հետ կապված հուշեր, սակայն կան վերլուծություններ, որոնց հետ համաձայնվել չի կարելի: Այսպես՝ խոսելով Շուշիի ազատագրման մասին՝ հեղինակը նշում է, որ ազատագրվել է հեշտությամբ և առանց դիմակայության<sup>5</sup>: Այս աշխատությունն ընդգրկում է 1988-1992 թթ. տեղի ունեցած այն դեպքերն ու իրադարձությունները, որոնց ամենական մասնակիցն է եղել ինքը: Հեղինակը հաճախ ռազմական ընդհանուցումներում արտահայտում է իր սեփական կարծիքը՝ որոշ տեղերում գերազնահատելով իր տեղը: Այնուամենայնիվ գիրքը կարևոր աղբյուր է (որպես՝ հուշագրություն) ուսումնասիրողների համար:

Ռազմաբժշկական ծառայության ստեղծմանն ու պատերազմում բուժաշխատողների գործունեությանն է նվիրված Վ. Մարությանի գիրքը<sup>6</sup>: Հեղինակն ականատեսի աչքերով է նկարագրում բանակի կազմավորումը և պատերազմի առանձին դրվագները: Հետաքրքիր են հատկապես Շուշիի ազատագրման վերաբերյալ հեղի-

<sup>1</sup> Տե՛ս Սողոմոնյան Ն., Կոլցո, 1 մաս, Ստեփանակերտ, 1994, էջ 8:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 27-28:

<sup>3</sup> Պետրոսյան Ա., Մեծն Շահէն, Ե., 2011:

<sup>4</sup> Բաղդասարյան Դ., Դիմակայություն (հուշագրություններ), Ե., 1998:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 110, 114, 119 և այլն:

<sup>6</sup> Մարության Վ., Սառա ծովածառ (Զապисն առաջնահատելու և առաջնահատելու մասին), Երևան, 1996.

նակի վկայությունները, երբ Արևադի Տեր-Թաղեսայանի հրամանով Սղնախ գյուղում ստեղծվեց դաշտային հոսպիտալ<sup>1</sup>:

Բժիշկ և լրագրող Արցախ Բունիաթյանի գիրքն<sup>2</sup> ընդգրկում է Մարտակերտի ռազմակատում տեղի ունեցած ռազմական գործողությունները 1992թ. ապրիլի 24-ից մինչև հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածը: Մարտակերտի ռազմակատին է նվիրված Ս. Մարգարյանի աշխատությունը<sup>3</sup>, որտեղ ներկայացված են Մարտակերտի ռազմական ճակատում տեղի ունեցած մարտական գործողությունների լուսանկարույին և տեղեկատվական քրոնիկոնը, Արցախյան պատերազմի մասնակիցների հուշերը:

Արձակագիր Կ. Դանիելյանի գրքում<sup>4</sup> մանրամասն նկարագրված է Արցախյան ազատագրական պատերազմը: Առավել մանրամասն են նկարագրված Ասկերանի շրջանի ինքնապաշտպանական ուժերի մղած մարտական գործողությունները:

Արցախյան ազատագրական պատերազմի մասին ուշագրավ տեղեկություններ կան նաև Հ. Աբրահամյանի աշխատություններում: Հ. Աբրահամյանի «Մարտնչող Արցախը (1917-2000), գիրք Գ (1985-2000)» աշխատության<sup>5</sup> երրորդ գլխում նկարագրված են հաջորդ՝ 1991 թ.-ի սեպտեմբերից մինչև 1992 թ.-ի մայիս տեղի ունեցած կարևոր հրադարձությունները, երբ Արցախի տարածքում բուն դրած ավելի քան 40 թուրքազերական բնակավայրեր, ներաշյալ՝ Շուշի քաղաքը, ազատագրվեցին և վերադարձվեցին տերերին՝ արցախահայությանը: Հեղինակի ուշադրության կենտրոնում են ԼՂՀ կայացման գործընթացը և դրան առնչվող մի շարք հարցեր: Արցախահայությունը, դիմագրավելով հակառակորդի նոր ճնշումներին, միևնույն ժամանակ հավաքագրում է իր ուժերը և ստեղծում ազգային բանակ, որի մասին խոսվում է հանգամանորեն:

Ընթացող պատերազմական գործողություններին զուգահեռ տեղի ունեցած ԼՂՀ անկախության հանրաքվեին և ընտրությունների վերլուծությանն է նվիրված Ս. Օհանջանյանի գիրքը<sup>6</sup>: Առանձին ռազմական գործողությունների մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Շ. Մկրտչյանը<sup>7</sup>:

Խնդրո առարկայի վերաբերյալ կարևոր ուսումնասիրություն է նաև Տարոն Հակոբյանի գիրքը<sup>8</sup>: Ներածության մեջ հեղինակը նշում է իր առջև դրված խնդիրները: Հեղինակը, ըստ փուլերի, վերլուծում է ԼՂՀ անկախության հռչակումը և անկախության կայացման գործընթացը: Հեղինակին հաջողվել է ցույց տալ նաև բանակաշինության գործընթացը:

Առաջին գլխում հեղինակը վերլուծում է ԼՂՀ անկախության հռչակման նախադրյալները, կանոնավոր բանակի ստեղծման գործընթացը, Շուշիի ազատագրումը (չխորանալով ռազմական գործողության մանրամասների մեջ), ինչպես նաև 1992 թ. ամռանը հանրապետության համար ստեղծված դժվարին ժամանակաշրջանը (Շահումյանի անկում-Դ.Զ.):

Երկրորդ գլխում՝ «Ուազմաքաղաքական կացությունը և պետական շինարարության հետագա ընթացքը ԼՂՀ-ում (1992 թ. օգոստոս-1994 թ. մայիս)» հեղինակն անդրադարձում է 1992 թ. հետո ԼՂՀ իշխանությունների քայլերին՝ Արցախի դիրքերն ամրապնդելու ուղղությամբ, ինչպես նաև Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծմանն ու գործունեությանը, ՀՀ և ԼՂՀ միջև ռազմաքաղաքական համագործակցությանը և այլն:

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 34-42:

<sup>2</sup> Բունիաթյան Ա., Արյունոտ օրեր, Մարտակերտ, Վաերագրություն, Գիրք I, Ե., 2000:

<sup>3</sup> Մարգարյան Ս., Մարտակերտ չհայտարարված պատերազմի կիզամետ (վաստագրություն), Ստեփանակերտ, 1999:

<sup>4</sup> Դանիելյան Կ., Արցախը չսանձած նժոյզ, Ե., 2001:

<sup>5</sup> Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը (1917-2000), գիրք Գ (1985-2000), Ստեփանակերտ, 2007:

<sup>6</sup> Օհանջանյան Ս., Անկախության քայլերը. ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն և ընտրությունները (1991-1998թ.), Ստեփանակերտ, 1998:

<sup>7</sup> Մկրտչյան Շ., Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, Ե., 1996:

<sup>8</sup> Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թ.), Ե., 2011:

Այսպիսով՝ S. Հակոբյանին հաջողվել է համակողմանիորեն ուսումնասիրել ԼՂՀ պետականաշխնության գործընթացը:

Ուշագրավ է Հովհակ Վարդումյանի աշխատանքը<sup>1</sup>, որն, ըստ Երևայիրին, գրվել է Շուշիի ռազմական գործողության դեկավար Արկադի Տեր-Թադևոսյանի խորհրդատվությամբ: Չինելով մասնագետ՝ նա գիտական բարեխողությամբ ընդհանրացրել է նախորդ հեղինակների աշխատանքներն ու տեսակետները, չի խուսափել օգտագործած գրականությունն ու սկբնաղբյուրները նշելուց: Շուշիի ազատագրման մասին տեղեկություններ կան նաև Հ. Բայանի աշխատությունում<sup>2</sup>:

Արժեքավոր ուսումնասիրություն է Միեր Հարությունյանի աշխատությունը<sup>3</sup>: Հեղինակը, օգտվելով մամուլից, ստեղծված ուսումնասիրություններից և արխիվային փաստաթղթերից, վերլուծում է Արցախյան ազատագրական պայքարի սկզբի իրադարձություններն ու պատերազմի հաղթական գագաթնակետը՝ Շուշիի ազատագրման ռազմագործողությունը: Գիրքը բաղկացած է Երկու բաժնից: Առաջին բաժնում («Ռազմաքաղաքական իրադրությունը Լեռնային Ղարաբաղում Շուշիի ազատագրման նախօրեին») ներկայացված են Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունները 1991 թ. ապրիլից («Օղակ» գործողություն) մինչև 1992 թ. մայիս: Հեղինակը կարողացել է տալ նաև Արցախյան ազատագրական պատերազմի պատմության պարբերացումը՝ բաժանելով երեք փուլի<sup>4</sup> և քաղաքական դեպքերը տարանջատել ռազմական դեպքերից: Հեղինակի ուշադրության կենտրոնում է գտնվում նաև ինքնապաշտպանական ջոկատների ստեղծման ընթացքը: Հեղինակը կարևոր տեղ է հատկացնում ինքնապաշտպանական ուժերի կազմավորման գործընթացին (ԼՂՀ Գև նախագահությունը համապատասխան որոշումն ընդունել է 1992թ. փետրվարի 24-ին):

Երրորդ բաժնում («Շուշիի ազատագրման ռազմագործողության նախապատրաստումը, ընթացքը և արդյունքները») արդեն ներկայացվում է Շուշիի ազատագրումը: Հեղինակը կարողանում է դեպքերի վերլուծությամբ ներկայացնել Շուշիի ազատագրման պահի հասունացումը. «Իր գագաթնակետին հասած ռազմաքաղաքական իրադրությունը սպառնում էր դուրս գալ վերահսկողությունից և զարգանալ արցախահայության համար վտանգավոր ձևով, եթե, իհարկե ժամանակին չվնասագերծվեին Շուշիի և Ստեփանակերտի հարակից գյուղերի կրակակետերը»<sup>5</sup>:

Մ. Հարությունյանը վերլուծում է նաև Շուշիի ազատագրման տնտեսական և ռազմական անհրաժեշտության գործուները, իսկ երրորդ գլխում՝ ռազմագործողության նախապատրաստական աշխատանքների գործընթացը, որտեղ նշում է, որ Շուշիի ազատագրման դիվանագիտական նախապատրաստական աշխատանքները սկսվել են դեռևս 1992 թ. փետրվարից: Լրատվաքարողական դաշտում հեղինակը բարձր է գնահատում հայկական լրատվամիջոցների աշխատանքը: Յուրաքանչյուր մեծ ռազմական գործողություն, ինչպիսին էր Շուշիի ազատագրումը, պահանջում էր հատկապես ռազմական նախապատրաստական աշխատանքներ: Հեղինակին հաջողվել է ցույց տալ ինչպես թշնամու ուժերի դասավորվածությունը, այնպես էլ հայկական կողմի քայլերը՝ ըստ «Շուշիի ազատագրման մարտական հրաման»-ի<sup>6</sup>:

Չորրորդ գլխում հեղինակն արդեն ներկայացնում է Շուշիի ազատագրման բուն ռազմագործողությունը՝ տալով ռազմագործողության բոլոր մանրամասները: Խորը քննության են Ենթարկված Շուշիի ազատագրման չորս ուղղությունների («26»-ի (Հյուսիսային), Շոշի (Արևելյան), Լաշինի (Հարավային), Ջանհասան-Թյոսալարի (Հյուսիս-Արևմտյան)) գործողությունները: Հեղինակը ռազմագործողությունը բաժանել է Երկու փուլերի<sup>7</sup>:

<sup>1</sup> Վարդումյան Հ., Շուշիի ազատագրումը, Ե., 2007:

<sup>2</sup> Եալյան Ր., Հայորեան Կարաճախ, Եր., 1994.

<sup>3</sup> Հարությունյան Մ., Արցախյան պատերազմի սկզբը և Շուշիի ազատագրումը, Ե., 2000:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 15:

<sup>5</sup> Հարությունյան Մ., Աշվ., աշխ., էջ 78:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 92-93:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 115:

Վերջին գլուխներում (ինգերորդ և վեցերորդ) հեղինակն արդեն խոսում է Շուշիի ազատագրման պատմական նշանակության մասին՝ մատնանշելով նաև համաշխարհյին նշանակությունը, ինչպես նաև Լաշինի ազատագրման և Հայաստանի հետ կապի վերականգման ու կենսական ձանապարհի բացման գործընթացը:

Այսպիսով՝ Մ. Հարությունյանի աշխատությունը կարևոր ուսումնասիրություն է՝ նվիրված Արցախյան պատերազմի սկզբի իրադարձություններին, Շուշիի ազատագրման ռազմագործողությանը:

Արցախյան ազատագրական պատերազմի պատմության ուսումնասիրության առումով կարևոր են նաև հուշանատյանները, Արցախյան հերոսներին նվիրված աշխատություններն ու գրքույկները<sup>1</sup>, որոնց մեջ կարևոր տեղեկություններ կան պատերազմական գործողությունների մասին:

Խոջալուի դեպքերի լուսաբանմանն ու ադրբեջանական քարոզամեքենայի մերկացմանն են ուղղված Հայկ Ղեմոյանի աշխատությունները<sup>2</sup>:

Արցախյան ազատագրական պատերազմի թեմայով պաշտպանվել են նաև թեկնածուական<sup>3</sup> և դրկտորական ատենախոսություններ:

Հայտնի է Սիեր Հարությունյանի «Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին 1991-1994 թթ.» թեկնածուական ատենախոսության սեղմագիրը<sup>4</sup>, որտեղ հեղինակը ներկայացնում է աշտպանության բանակի կազմակորման գործընթացը՝ բաժանելով չորս փուլերի և ընդգրկելով 1988-1994 թթ.:

Հայտնի է Կիմ Ղահրամանյանի («Հյուսիսային Արցախ (պատմական քննական վերլուծություն)»)<sup>5</sup> պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը<sup>6</sup>: Հեղինակն այստեղ վերլուծում է Հյուսիսային Արցախում տեղի ունեցած դեպքերը՝ ցույց տալով, որ ադրբեջանական ազրեսիան սկսվել է դեռևս Սումգայիթից առաջ: Լուսաբանված են նաև Գետաշենի ենթաշրջանի, Շահումյանի շրջանի հինքնապաշտպանական մարտերը («Օղակ» գործողության ժամանակ):

Տիգրան Բալայանի ատենախոսությունը<sup>6</sup> նվիրված է ռազմագործողություններին՝ ընթացող բանակցություններին:

Իր ծավալով ու բովանդակությամբ առ այսօր չգերազանցված իրատարակություն է միահատոր հանրագիտարանը<sup>7</sup>, որը սակայն գերծ չէ որոշ թերություններից: Հանրագիտարանում գոյանարտի մասնակիցների կենսագրականների հետ միասին ներկայացված են նաև Արցախյան ազատագրական պատերազմի ռազմագործողությունների նկարագիրը, շարժմանը մասնակից բժիշկների, արվեստագետների և այլ ոլորտների մասնագետների մասնակցությունն Արցախյան շարժմանը: Սակայն հանրագիտարանում բացակայում են մարդկանց գործողությունների ամբողջական ընթացքի նկարագրությունը, զինադադարի լուսաբանումը, բացակայում են շատ մարդկանց անուններ, իսկ եղած անունների կենսագրականների ծավալների մեջ կան անհավասարություններ:

<sup>1</sup> Ղարիբյան Գ., Արթուրը: Արժվի թոշքը էր, Ե., 1999, Արշակյան Ա., Մահ չիմացյալ՝ մահ, մահ իմացյալ՝ անմահություն, Ե., 1993, Արքահամյան Հ., Մկրտչյան Ը., Արցախի համար զոհված դիզակցները, Ե., 2000, Արուստամյան Գ., Իմ սերը թեզ հետ է ողջեր և նահատակներ, Ե., 1998, Նանագույսան Ս., Արծիվները բարձունք են տենչում, գիրք Ա, Ե., 1992, գիրք Բ և Գ, Ե., 1993, Եսայան Ե., Բոյլ նահատակաց, Ե., 1996, Սուսայելյան Բ., Համուն Արցախի և հայրենի Մարտունու, Ստեփանակերտ, 1998, Առաքելյան Վ., Ազգայան Գ., Նրանք փառքով անմահացան, Ե., 1996, Նանագույսան Ս., Շահեն, Ե., 1993, Սահակյան Ռ., Արծվապաշտ երկիր. Փաստագեղարվեստական, Ե., 2004, Գևորգյան Հ., Պետոն, Ե., 1994 և այլն:

<sup>2</sup> Դեմօյն Ղ., Մելիկ-Շահնազարյան Լ., Խօջալինսկու գործությունը: Օսօբայ պակա, Եր., 2003, Դեմօյն Ղ., Կարաբահական դրամա: Տարբերակական գործությունը, Եր., 2003, Demoyan H., Melik-Shahnazaryan L., The KHOJALU CASE: A SPECIAL DOSSIER, Yerevan, 2004, ... prepared by Hayk Demoyan, Yerevan, 2004.

<sup>3</sup> Արշակյան Ա., նշվ. աշխ.:

<sup>4</sup> Հարությունյան Ս., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին 1991-1994 թթ., թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Ե., 2003:

<sup>5</sup> Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ (պատմական քննական վերլուծություն), պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Ե., 2000:

<sup>6</sup> Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցերը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994 թթ., թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Ե., 2002:

<sup>7</sup> «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994 թթ.», գիտավոր խմբ.՝ Հ. Այվազյան, Ե., 2004:

Արցախյան ազատագրական պատերազմի վերաբերյալ տեղեկություններ կան նաև Բ. Ուլուբարյանի<sup>1</sup>, Վ. Բալայանի<sup>2</sup>, Ալ. Մանասյանի ու Ա. Ղևոնդյանի<sup>3</sup> աշխատություններում:

Այսպիսով՝ ի մի բերելով Արցախյան ազատագրական պատերազմի պատմության ուսումնասիրվածությունը՝ կարող ենք նշել.

1. Արցախյան ազատագրական պատերազմի պատմությունը միշտ եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Ի տարբերություն Արցախյան շարժման արդի փուլի մնացած շրջափուլերի, այս շրջափուլի ուսումնասիրվածությունն ավելի «բարվոր վիճակում է»:

2. Պատերազմի վերաբերյալ ստեղծվել են տարբեր բնույթի գործեր՝ ուսումնասիրություններ, հուշագրություններ, գրքույկներ, հուշամատյաններ:

3. Արցախահայության հերոսական պայքարի նախադրյալների, դեպի անկախություն տանող Ճանապարհի, Աղրբեջանի կողմից սանձազերծված պատերազմում տարած հաղթանակների շատ հարցեր դեռևս ինչպես հարկն է չեն արժանացել հետազոտողների ուշադրությանը: Անհրաժեշտ է վերլուծել նաև հերոսական պայքարի առանձին կողմերը, 1994 թ. զինադադարի հաստատումը:

**Давид Джулхакян, Карине Асатрян, Арцахская война 1991-1994 гг и ее оценивание в армянской историографии,-** Об арцахской освободительной войне создане ряд трудов. В этих трудах проанализированы различные аспекты заданного вопроса. Роль и значение выигранной войны и военные действия подвергаются обсуждению.

Изучение в основной происходило создалось по свежим следам событий и есть необходимость нового и повторного оценивания.

**Ключевые слова** - Необъявленная война, историография, "Кольцо", освободительная война, карабахская проблема.

**Davit Julkhakyan, Karine Asatryan, Artsakh war of 1991-1994 and its evaluation by the Armenian historiography,-** About Artsakh liberation war are created a number of works. In these works various aspects of the mentioned question are analysed. The role and meaning of the won war and military operations are subject to discussion.

Studies mostly have been carried out by the fresh tracks of the events and there is a need for new evaluation.

**Key words** - Undeclared war, historiography, "Ring", the liberation war, the Karabakh problem.

<sup>1</sup> ՈՒլուբարյան Բ., Արցախյան գոյապայքարը, Ե., 1994, նոյնի՝ Արցախյան գոյամարտի տարեգրություն, Ե., 1997, նոյնի՝ Արցախի պատմությունը. Սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994:

<sup>2</sup> Բալայան Վ., Արցախի պատմություն, Ե., 2002:

<sup>3</sup> Մանասյան Ալ., Ղևոնդյան Ա., Լեռնային Ղարաբաղ. Ինչպես է դա եղել..., Ե., 2011: